368
Б-64

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

294

# ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՅԵՐԵՎԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ
## 1924-25 ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ

334/27

ՅԵՐԵՎԱՆ
1926

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ

## 1924-25 ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ

294

334/7
20

ՅԵՐԵՎԱՆ
1926

MAR 2010
3368
Ե-64
1003
13819

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՅԵՐԵՎԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ

## 1924-25 ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ

ՅԵՐԵՎԱՆ
1926

05 APR 2013

Գրատեպ. № 697(բ), Տիրաժ 500, Պատվեր № 3754

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Յերևան

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յերևանի Ապահովագրական Գանձարկղը ընդգրկում է իր մեջ Յերևան քաղաքն ամբողջովին, ինչպես և Կոտայքի, Ախտայի, Բաշ-գյառնիի, Հրազդանի, Ղամարլվի, Վեդիբասարի ու վերջերքս նաև Սարդարաբադի գավառակները։

Ապահովագրական Կայաններ կան Ղամարլվում ու Սարդարաբադում։

Հիշատակված վայրերում աշխատող բոլոր բանվորներն ու ծառայողներն անխտիր ապահովագրված են Գանձարկղի կողմից, վորոնք բավարարվում են հետևյալ ձևի նպաստներով՝

Ժամանակավոր անաշխատունակության, կարանտինի, հղիության (8-9 ամսից), յերեխայի սնլու, աննդադրամ, գործազրկության ու թաղման. բացի թված նպաստներից տրվում է նաև թոշակ աշխատանքի անկարներին, հաշմանդամներին, մահացածների ընդանիքներին, վաստակավոր ուսուցիչներին ու քաղաքացիական կռվից տուժվածներին։

Գանձարկղի յեկամուտները կազմում են այն ապահովագրական տոկոսները, վորպիսին հատկացնում են հիմնարկ-ձեռնարկները իրենց աշխատակիցներին վճարած աշխատավարձից։

Գանձարկղի ղեկավար մարմինը հանդիսանում է Կոմիտեն, բաղկացած 7 անդամից, գլուխ ունենալով իր պատասխանատու նախագահը։

Գանձարկղը ունի նաև իր Վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած յերեք անդամից։

Գանձարկղը անմիջապես յենթարկվում է Սոցապկենտրոնական վարչության, վորից ստանում է հրահանգներ ու ցուցմունքներ ապահովագրման խնդիրների նըկատմամբ ու ամսեկան մեկ անգամ ներկայացնում է հաշվետվություն իր գործարքի մասին։

Գանձարկղը ունի հետևյալ բաժինները՝ գրասենյակ, հաշվապահական, նպաստ կենսաթոշակների, բժըշկական, վերստուգիչ հանձնաժողով ու վիճակագրական յենթաբաժին։

Սույն 24/25 թ. հաշվետվությամբ Գանձարկղը նըպատակ է դնում ծանոթացնելու ու մասսայականացնելու մեկ տարվա տարած աշխատանքների մասին, լսելու համար առողջ քննադատություններ մեր բացերի վերաբերյալ, աստիճանաբար ուղղելով յեղած թերությունները, խորացնելու համար ապահովագրական գաղափարները աշխատավորության մեջ։

## ՖԻՆԱՆՍԱ—ՀԱՇՎԱՅԻՆ ԲԱԺԻՆ.

Գանձարկղը թեվակոխելով 24—25 շրջ. տարին, իր գործունեյությունը դնում է ավելի հաստատուն հիմքերի վրա, ներկայացնելով իր բյուջետային նախահաշիվը։

Նկատի ունենալով 23 թվի սաղմային սկզբնավորությունը և նոր կազմակերպվելը, յերբ դեռ հաշվառման չեր յենթարկվել ու չեր պարզվել Գանձարկղի ընդհանուր ապահովագիրների և ապահովագրվածների թիվը, ինչպես նրանց վճարած աշխատավարձի չափը և ամուր տարիֆիկացիան, նման պայմաններում նախահաշիվ ներկայացնելը, առանց տարիների փորձառություն ունենալու, այդ աշխատանքը պետք է մեր Գանձարկղի դրական կողմերից մեկը համարել։



Գանձարկղը ընդգծելով իր առաջիկա աշխատանքների ծրագիրը, պատասխանատվություն է վերցնում իր վրա, կատարած յուրաքանչյուր գործարքի համար, խորը գիտակցելով, վոր բանվորների կոպեկների հետ գործ ունի և հաշվետու յե բանվորական ու պրոֆմիութենական կազմակերպությունների առաջ։

Կազմելով իր բյուջեն, առաջին հերթին նպատակ է դնում հնարավորության սահմաններում սխմել ու կըրճատել կազմակերպչական ծախքերը, հասցնելով մինիմումի, ինչպիսին յերևում է ներքև բերած տարեկան հաշվետվության անալիզից 5,8 տոկոսի։

Սկզբնական շրջանում, յերբ մեր մասսան թյուր ըմբռնումն ուներ ապահովագրական գաղափարների մասին ու թերևս պարզ չեր, թե գանձված ապահովագրական վճարները ինչ նպատակների համար եր գործադըրվում, հիմնարկ—ձեռնարկները դժվարությամբ եյին կատարում իրենց պարտականությունները հանդեպ Գանձարկղին, չմուծելով ժամանակին հասանելիք ապտոկոսները, վորով տնտեսական ծանր դրություն եր ստեղծվում Գանձարկղի համար։

Գանձարկղն ել իր հերթին չկարողանալով բավարարել ապահովագրվածների պահանջներին, դժգոհության տեղիք եր տալիս աշխատավորության մեջ։ Այդ յերևույթը պետք է ասել, բավական խորը կերպով անդրադառնում եր Գանձարկղի աշխատանքների վրա։

Դրա վրա յեթե ավելացնենք այն դժգոհությունները ու տրտունջները մեր ապահովագիրների կողմից, վոր իբր թե նրանց վճարած ապտոկոսները Գանձարկղը կուտակում է բանկերում, ստեղծելով հատուկ դրամագլուխ, այն ժամանակ պատկերը միանգամայն պարզ է լինում, թե ինչ ապրումներ է ունեցել մեր Գանձարկղը, այդ զուտ բանվորական հիմնարկությունը, իր կազմակերպչական շրջանում։

Պատահել են նույնպես բազմաթիվ դեպքեր, երբ Գանձարկղը ստուգումներ կատարելով, հայտնաբերել է մի շարք հիմնարկներում թաղցրած գումարներ, որոնք պահվել են հիմնարկների նեղ տնտեսական շահերի տեսակետից ելնելով, ղեկավարվելով սուբյեկտիվ մտայնությամբ և այդ հողի վրա Գանձարկղը բաղխումն է ունեցել ապահովադիրների հետ։

Ավելորդ չենք համարում նաև ընդգծելու տեղկոմների մի քանիսի անփութությունը դեպի Գանձարկղը, որի շնորհիվ հաճախ մեր բանվորները դժգոհ են մնացել Գանձարկղից։

Այն փաստաթղթերը, որոնք գանձարկղի համար դրամական վճարումների հիմք են կազմում, տեղկոմները պահանջված ձևով չեյին լրացնում, կամ սխալ տեղեկանք տալիս, որպիսին անընդունելի համարվելով, վերադարձվել է կարևոր ուղղումներ կատարելու։ Այդ երևույթը անդրադառնալով ապահովագրվածների հոգեբանության վրա, դժգոհությունների տեղիք է տվել, անկախ մեր ցանկությունից ու ձգտումներից։

Գաղափար տալու համար մեր ապահովադիրներին և ապահովագրվածներին մեր 24 - 25 թվի բյուդջեյի, ինչպես և կատարված գործարքի մասին, առաջ ենք բերում նախահաշիվը ու տարեկան հաշվետվության անալիզը։

(Տես հետեվյալ տախտակները)

# ՄՈՒՏՔԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՅԵՐԵՎԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ 1924—25 Թ.

| Նախահաշվ. սպասելիքն. Պարագրաֆ | Նախահաշվ. սպասելիքն. Հոդված | ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ | Մուծված է ընդամենը նախորդ նախահաշվ. շրջան. | Մուծված է ընդամենը նախորդ հաշվ. ամսում. | Սպասվում է մուծանքներ: Մեկ ամսում | Սպասվում է մուծանքներ: Մեկ կվարտալ. | Սպասվում է մուծանքներ: Մեկ նախահաշվ. տար. 24—25 թ. | Կենտ. ցուցմունք մուծանք. մասին: Մեկ ամսվա | Կենտ. ցուցմունք մուծանք. մասին: Մեկ տարվա 24—25 թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | Ապահովագրական վճարներ հիմնարկներից, ձեռնարկներից և տնտեսություններից. | | | | | | | |
| | | 10 տոկոսից | | | 13,050 | 39,150 | 156,600 | | |
| | 1 | 12 " | | | 850 | 2550 | 10.200 | | |
| | 2 | 16 " | | | 5,486 | 16,458 | 65,832 | | |
| | 3 | 18 " | | | 4,540 | 13,620 | 54,480 | | |
| | 4 | 20 " | | | 1.404 | 4212 | 16,848 | | |
| | 5 | 22 " | | | 3,170 | 6,510 | 38,040 | | |
| | | Ընդամ. 1 հոդ. | | | 28,500 | 85,500 | 342,000 | | |
| 2 | | Պենի | | | 285 | 855 | 3420 | | |
| | | Ընդամ. 2 հոդ. | | | 285 | 855 | 3420 | | |
| 3 | | Դրամագլխի տոկոսներ. | | | 15 | 45 | 180 | | |
| | | Ընդ. 3 հոդ. | | | 15 | 45 | 180 | | |
| 4 | | Մուտք նախորդ պարտքի դիմաց | — | — | — | — | — | | |
| 5 | | Սպասելիք մուտք կենտրոնական վարչությունից. | — | — | — | — | — | | |
| | | Ընդամենը մուտքի նախահաշվով սպասվում է մուտք | | | 28800 | 86400 | 345 600 | | |

# ԾԵԼՔԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՅԵՐԵՎԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ 1924—25 Թ.

| Նախահաշվ. ստորաբաժ. Պարագրաֆ | Նախահաշվ. ստորաբաժ. Հոդվածն. | ԾԵԼՔԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Նախահաշվով հատկացված նախորդ ամսվան. | Փաստորեն ծախսված է վերջին ամսում. | Պահանջվում է: Մեկ ամսվա | Պահանջվում է: Մեկ կվարտալում | Պահանջվում է: Մեկ տարում 24-25 թ. | Հաստատվում է: Մեկ ամսվա | Հաստատվում է: Ամբողջ տար. | Տոկոսային հարաբերություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | Ժամանակ. անաշխատունակ. | | | 7200 | 21.600 | 86400 | | | |
| | | Ընդ. պար. 1 | | | 7200 | 21,600 | 86400 | | | 25.- |
| 2 | | Լրացուցիչ նպաստ | | | | | | | | |
| | 1 | Երեխայի օժիտ | | | 1,675 | 5025 | 20,100 | | | |
| | 2 | Երեխայի սնունդ | | | 3,080 | 9240 | 36.960 | | | |
| | 3 | Թաղման ծախք. | | | 429 | 1287 | 5,148 | | | |
| | | Ընդ. պար. 2 | | | 5184 | 15,552 | 62,208 | | | 18.- |
| 3 | | Հաշմանդության | | | | | | | | |
| | 1 | Կենսաթոշ. հաշմանդ. | | | 1.272 | 3816 | 15264 | | | |
| | | Մահացածների ընտանիք. | | | 320 | 960 | 3840 | | | |
| | 2 | Հաշման. և նրանց ընտ. անդամ. խնամելը ուրիշ հիմնարկներում. | | | 60 | 180 | 720 | | | |
| | 3 | Հաշմանդամների համար կատարված այլ և այլ ծախքեր | | | 20 | 60 | 240 | | | |
| | 4 | Արհեստանոցների կազմակերպելուն և հանրակաց. օժանդակություն | | | 20 | 60 | 240 | | | |
| | 5 | Աշխատունակ. տոկոսային. վարձատ. | | | 180 | 540 | 2160 | | | |
| | | Ընդամ. պար. 3 | | | 1,872 | 5.616 | 22464 | | | 6.5 |
| 4 | | Գործազրկության | | | | | | | | |
| | 1 | Նպաստ դրամով. | | | 2592 | 7776 | 31,104 | | | |
| | 2 | " մթերքով. | | | — | — | — | | | |
| | 3 | Այլ ձևի օգնութ. | | | — | — | — | | | |
| | | Ընդ. պար, 4 | | | 2592 | 7776 | 31,104 | | | 9. |
| 5 | | Բժշկակ. օգնության | | | | | | | | |
| | | Ապահովագր. տոկ. | | | 7124 | 21.372 | 85488 | | | |
| | | Պենուց | | | 76 | 228 | 912 | | | |
| 6 | | Պրոֆիլակտիկա | | | 7200 | 21609 | 86400 | | | 25.- |
| 7 | | | | | — | — | — | | | |
| | | Կենտրոնացման ֆոնդեր | | | | | | | | |
| | | Ապահ. վճարներից | | | 2850 | 8550 | 34200 | | | |
| | | Պենուց | | | 30 | 90 | 360 | | | |
| | | Ընդ. պար. 7 | | | 2880 | 8640 | 34560 | | | 10 |
| 8 | | Կազմակերպչական ծախսեր. | | | | | | | | |
| | 1 | Անձնական կազմի. | | | 1200 | 3600 | 14,400 | | | |
| | 2 | Ապահովագրական տոկոսներ, | | | 192 | 576 | 2304 | | | |
| | | Կուլտ-կրթ. տոկո. | | | 30 | 90 | 360 | | | |
| | 3 | Տնտեսական | | | 150 | 450 | 1800 | | | |
| | 4 | Փոստ—հեռախոս. | | | 20 | 60 | 240 | | | |
| | 5 | Վարչական | | | 30 | 90 | 360 | | | |
| | 6 | Գրտ. կազմ. ծախս | | | 30 | 90 | 360 | | | |
| | 7 | Գույք | | | — 120 | 360 | 1440 | | | |
| | | Շենքի վերանորոգ. թ. | | | 100 | 300 | 1200 | | | |
| | | Ընդ. պար. 8 ով | | | 1872 | 5616 | 22464 | | | 6.9 |
| | | Ընդ. ըստ նախահաշվով պահանջվում է ծախք. | | | 28,800 | 86,400 | 345,600 | | | 100 |

**ՄՈՒՏՔ** Յերապգանձարկղի 24/25 թ. տարեկան հաշվետվության անալիզ. **ՅԵԼՔ**

| Մուտքի ստորաբաժանում | 1-ի կվարտալ Ռ. | Կ. | 2-դ կվարտալ Ռ. | Կ. | 3-դ կվարտալ Ռ. | Կ. | 4-դ կվարտալ Ռ. | Կ. | Գումար Ռ. | Կ. | Ընդամենը Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ապվճարներ | 80.719 | 99 | 68.610 | 25 | 120.754 | 99 | 122.925 | 64 | 393.010 | 87 | | |
| Տույժ | 876 | 63 | 672 | 14 | 369 | 26 | 296 | 06 | 2,214 | 09 | | |
| Դրամագլխի Տոկոսներ | — | — | — | — | — | — | 227 | 55 | 227 | 55 | 395.452 | 51 |
| | | | | | | | | | | | 395,452 | 51 |

| №№ ըստ կարգի | ԾԱԽՍԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | 1-ն կվարտալ Ռ. | Կ. | 2-դ կվարտալ Ռ. | Կ. | 3-դ կվարտալ Ռ. | Կ. | 4-դ կվարտալ Ռ. | Կ. | Գումար. Ռ. | Կ. | Ընդամենը Ռ. | Կ. | Տոկոս. հարաբերություն. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Գործառնական ծախք** | | | | | | | | | | | | | |
| | **Նպաստ** | | | | | | | | | | | | | |
| | Ժամանակավոր անաշխատունակ. | 17.302 | 88 | 14.284 | 75 | 22.050 | 31 | 38.333 | 76 | 91.971 | 70 | | | |
| | Հղիության ռոճիկ | 2 907 | 80 | 3.109 | 11 | 2.874 | 75 | 2 801 | 51 | 11.693 | 17 | 103.664 | 87 | 26,2 |
| 2 | **Լրացուցիչ նպաստ** | | | | | | | | | | | | | |
| | Յերեխայի օժիտ | 4.531 | 80 | 4 856 | 80 | 6.271 | 30 | 6.616 | — | 22 275 | 90 | | | |
| | » սննդադրամ | 7.326 | — | 6.464 | 40 | 11.245 | 86 | 11.902 | 20 | 36.938 | 46 | | | |
| | Թաղման նպաստ | 741 | — | 1.249 | 10 | 1.561 | 40 | 3.392 | 80 | 6.944 | 30 | 66.158 | 66 | 16,8 |
| 3 | **Գործազրկության** | | | | | | | | | | | | | |
| | Նպաստ դրամով | 6.611 | 34 | 4.966 | 83 | 6.061 | 94 | 4.722 | 06 | 22.362 | 17 | | | |
| | » մթերքով | — | — | — | — | 1.212 | 07 | — | — | 1.212 | 07 | 23.574 | 24 | 6, |
| 4 | **Թոշակ** | | | | | | | | | | | | | |
| | Հաշմանդամներին | 5.743 | 85 | 4.303 | 75 | 4.272 | 77 | 4.651 | 25 | 18.971 | 62 | | | |
| | Մահացածների ընտանիքներին | 2 106 | 75 | 1.760 | — | 2.296 | 80 | 2.661 | 40 | 8.824 | 95 | | | |
| | Հաշմանդամ Սոբեսում | 170 | 57 | — | — | — | — | — | — | 170 | 57 | | | |
| | » խնամելուն | — | — | — | — | — | — | 26 | 80 | 26 | 80 | 27.993 | 94 | 7, |
| 5 | **Աշխատանքի տեսչության** | 241 | 62 | 461 | 78 | 498 | 13 | 813 | 68 | 2.015 | 21 | 2.015 | 21 | 0,5 |
| | | | | | | | | | | | | 223.406 | 92 | 56,5 |
| | **Կազմակերպչական ծախք** | | | | | | | | | | | | | |
| | Անձնական կազմի պահպանման | 3.548 | 27 | 3.764 | 99 | 3.789 | 02 | 4.291 | 84 | 15.394 | 12 | | | |
| | Տնտեսական ծախքեր | 633 | 48 | 1.064 | 25 | 1.722 | 74 | 680 | 99 | 4.101 | 46 | | | |
| | Վարչական ծախսեր | 18 | 29 | — | — | 269 | 32 | 215 | — | 502 | 61 | | | |
| | Գիտական կազմակերպչական | — | — | 21 | — | 112 | 40 | 81 | 61 | 215 | 01 | | | |
| | Ձեռք բերած ինվենտար | 78 | 20 | 2.329 | 90 | — | — | 312 | 20 | 2.720 | 30 | 22.933 | 50 | 5,8 |
| 6 | **Բժշկական Ֆոնդ** | | | | | | | | | | | | | |
| | Գործառնակ. ծախքեր | 1.017 | 86 | 739 | 87 | 375 | 29 | 2.672 | 89 | 4.805 | 91 | | | |
| | Փոխադրված կենտվարչության | 18.508 | 99 | 17.186 | 44 | 32.908 | 98 | 32.627 | 16 | 101.231 | 57 | 106.037 | 48 | 26,8 |
| | կենտրոնաց. ֆ. Համամիութենակ. | 5.381 | 14 | 6.358 | 82 | 8.414 | 16 | 8.422 | 69 | 28 576 | 81 | | | |
| | կենտրոնաց. ֆ. Հանրապետական | 2.297 | 26 | 2 025 | 10 | 3 698 | 24 | 3.922 | 21 | 11.942 | 81 | 40.519 | 62 | 10,3 |
| | Չգործադրված գումար | — | — | — | — | — | — | — | — | — | | 2.554 | 99 | 0,6 |
| | Ընդամենը | 79.167 | 10 | 74.946 | 89 | 109.635 | 48 | 129.148 | 05 | Ընդամենը | | 395.452 | 51 | 100% |

Ինչպես յերևում է նախահաշվից, մուտք սպասվելիս է յեղել 24—25 շրջանառության տարվա համար 345.600 ռ., սակայն փաստորեն ստացվել է 395.452 ռ. 51 կ. Նախահաշվից ավել ստացված՝ 49.852 ռ. 51 կ. գումարը հետևանք է Գանձարկղի հետևողական պլանամեր աշխատանքների, վորով աստիճանաբար խորացնելով ապահովագրման գաղափարները, դեպ իրեն է գրավել բանվորության ու ապահովադիրների համակրանքը։

Մեր ապահովադիրների և ապահովագրվածների մեջ յերբեմն արտահայտվել են թյուր ըմբռնումներ մեր Գանձարկղի գործունեության առթիվ. լսել ենք տրտունջներ, վոր իբր թե Գանձարկղը հիմնարկ—ձեռնարկներից դրամական գանձումներ կատարելով, ստացած գումարները փոխանակ բուն նպատակների համար գործադրելու, խոշորագույն մասը կենտրոնացնում է բանկերում ու այդպիսով կուտակումներ կատարում։

Ցրելու համար նման մտայնությունները մեր ցույց տված հաշվետվության անալիզից, պարզվում է, վոր փաստացի մուտք յեղել է 395.452 ռ. 51 կ. վորից գործարքային ծախք յեղել է 392.897 ռ. 52 կ., մնացել է չգործադրված առ ձեռը գումար 2554 ռ. 99 կ., վորը կազմում է ընդհանուր մուտքի 0,6 տոկոսը. հետևաբար 99,4 տոկոսը բացառապես ծախսվել է անալիզում մատնանշված ապահովագրման նպատակներին։

Այս թվական տվյալները գալիս են վերացնելու բոլոր այն մտայնությունները, ու ասեկոսեները, վորոնք թյուրիմացությամբ ստեղծվել են Գանձարկղի շուրջը։

Ժամանակավոր անաշխատունակության (հիվանդության ու ծննդաբերության արձակուրդի ռոճիկ) նախահաշվով չնայած հատկացված է յեղել 86.400 ռ. սակայն փաստորեն ծախսվել է 103.664 ռ. 87 կ. գերածախս է յեղել 17.264 ռ. 87 կ., վորը հետևանք է ապահովագրվածների աճմանը։

Այդ ծախսերի մեջ է մտնում Գանձարկղի ցույց տրված աջակցությունը մյուս Գանձարկղների հիվանդ անդամներին ու սանատորյա գնացողներին վորը արտահայտվում է հետևյալ ձևով.

**Ցերգանձարկղի հասցրած օգնությունը զանազան Գանձարկղների հիվանդներին.**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Վաղարշապատի Գանձարկղին | 700 ռ. | 03 կ. |
| 2. | Մեղրու | » | 508 ռ. | 71 կ. |
| 3. | Զանգեզուրի | » | 1.443 ռ. | 76 կ. |
| 4. | Նախիջևանի | » | 322 ռ. | |
| 5. | Դարգավառի | » | 1.031 ռ. | 85 կ. |
| 6. | Լենինականի | » | 516 ռ. | 05 կ. |
| 7. | Լոռու-Փամբակի | » | 1.095 ռ. | 29 կ. |
| 8. | Նոր-Բայազետի | » | 331 ռ. | 54 կ. |
| | Գումար | | 5949 ռ. | 23 կ. |

**2. Սանատորիաներ գնացող հիվանդներին տրված ռոճիկը**

| №№ ըստ կարգ | ՎՈՐ ՍԱՆԱՏՈՐԻԱՆ | Հիվանդների թիվը. | | Տրված ռոճկաչափը | |
|---|---|---|---|---|---|
| | | Բան. | Ծառ. | Ռ. | Կ. |
| 1 | Յեվպատորյա | 3 | 9 | 1.153 | 23 |
| 2 | Բորժոմ | 3 | 4 | 409 | 25 |
| 3 | Աբասթուման | 6 | 14 | 1.067 | 77 |
| 4 | Դիլիջան | 11 | 32 | 2.241 | 27 |
| 5 | Պյատիգորսկ | 3 | 8 | 854 | 92 |
| 6 | Եսենտուկի | 1 | 3 | 242 | 11 |
| 7 | Ախթալա | 17 | 17 | 953 | 36 |
| 8 | Ցենի | — | 1 | 60 | — |
| 9 | Կիսլավոդսկ | 2 | 7 | 911 | 47 |
| 10 | Ցագվերի | — | 2 | 129 | 45 |
| 11 | Սեվաստոպոլ | — | 2 | 222 | 40 |
| 12 | Յալտա | — | 1 | 90 | — |
| 13 | Արազինա | 2 | 1 | 240 | 24 |
| 14 | Ատամիկ | — | 1 | 60 | — |
| 15 | Արզնի | 5 | 10 | 630 | 33 |
| 16 | Ժելեզնովոդսկ | — | 1 | 21 | 50 |
| 17 | Սոչի | — | 2 | 200 | 25 |
| | Գումար | 53 | 115 | 9.487 | 55 |



Ուշադրավ է նույնպես գործադուրկների պատկերը, չնայած, վոր նախահաշվով հատկացված է յեղել 31.104 ռ. 9—տոկոս, սակայն փաստորեն ծախսվել է 2[illegible].574 ռ. 24 կ.—6 տոկոս, այսպիսով Գանձարկղը ունեցել է խնայողություն 7.529 ռ. 76 կ.— 3 տոկոս, վորից պարզվում է, վոր գործադուրկների թիվը աստիճանաբար պակասում է, վորը հետևանք է մեր արտադրության վերելքի։

Աշխատանքի տեսչության, չնայած 24-25 տարվա ընթացքում վճարված է յեղել 2.015 ռ. 21 կ., բայց պետք է շեշտել, վոր աշխտեսչությունը սոցապգծով առանձին աշխատանք չի տարել և չի արդարացրել իր վրա դրած պարտականությունները։

Կազմակերպչական ծախքերը՝ 2[illegible].933 ռ. 50 կ., վորը կազմում է ընդհանուր մուտքի 5,8 տոկոսը, հասցրած է մինիմումի, վորը նորմալ դրություն է Գանձարկղի նկատմամբ։

Բժշկական օգնության ֆոնդին, նախահաշվով հատկացված է յեղել 86.400 ռ., փաստորեն ծախսված է 106.037 ռ. 48 կ., այսինքն մեր բյուջեյի 26,8 տոկոսը. այդ կատարված փաստը գալիս է համոզելու, վոր իզուր են այն դժգոհությունները, թե Գանձարկղը անունով է միայն բժշկական օգնություն հասցնում ապահովագրվածներին։

Հաշվետու տարվա սկզբում Գանձարկղի հաստիքային աշխատակիցների թիվը յեղել է 20, իսկ տարեվերջին 16։

Գանձարկղի 24-25 թ. լրիվ պատկերը տալու համար, առաջ ենք բերում տարեկան հաշվեկշիռը, վորը արտահայտվում է հետևյալում։

# ՀԱՇՎԵ

**Յերեվանի Սոցիալական Ապահովագրական Գանձարկղի**

| №№ ըստ կար. | ՀԱՇԻՎՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ | Մնաց. առ 1 հոկտ. 24 թ. | | | | Շրջանառ. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դեբետ | | Կրեդիտ | | Դեբետ | |
| | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| 1 | Հաշիվ դրամարկղի | 561 | 25 | | | 107 506 | 32 |
| 2 | » Վարկային ընկեր. | | | | | 24.351 | 19 |
| 3 | » Գործառնակ. ծախք. | | | | | 75.921 | 46 |
| 4 | » Կազմակերպ. ծախք. | 2.151 | 28 | | | 5·581 | 64 |
| 5 | » Ապահովադիրների | | | | | 125.577 | 04 |
| 6 | » Ապ. վճարների | | | | | 122.925 | 64 |
| 7 | » Պենի | | | | | 296 | 06 |
| 8 | » Թոշակն. և նպ. ֆոնդի | | | | | 75 921 | 46 |
| 9 | » Բժշկական ֆոնդի | | | | | 35.300 | 05 |
| 10 | » Կազմակերպչ. միջոց. | | | | | 3.204 | 59 |
| 11 | Կենտ. ֆ. { Համամիութ. ֆ-ի | | | 981 | 76 | 8 422 | 69 |
| | Կենտ. ֆ. { Հանրապետ. ֆ-ի | | | | | 3.922 | 21 |
| 12 | Հաշիվ զանազանանձ. և հիմն. | 1.285 | 29 | 89 | 56 | 50.556 | 70 |
| 13 | » Փոխանցիկ գումար. | | | 3.498 | 32 | 7·674 | 39 |
| 14 | » Կենտրոնակ. վարչ. | 571 | 82 | | | 49.902 | 91 |
| 15 | » Տեխնոն. և այլ մուտք. | | | | | 1·080 | 72 |
| 16 | » Գույքի | | | | | 4.289 | 93 |
| 17 | » Գույքաֆոնդի | | | | | | |
| 18 | » 24 թ. փակվել. հաշիվն. | | | | | 49 | 69 |
| 19 | » Ստացված մուրհակն. | | | | | 14 238 | 55 |
| | Բալանս | 4.569 | 64 | 4 569 | 63 | 716.728 | 24 |



# ԿՇԻՌ

**1924-25 շրջանառության տարվա**

| Հաշվետու շրջան. | | Շրջանառ. տարեվերջ. | | | | Մնաց. առ 1 հոկ. 25 թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրեդիտ | | Դեբետ | | Կրեդիտ | | Դեբետ | | Կրեդիտ | |
| Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| 101.250 | 70 | 298 081 | 74 | 291.372 | 56 | 7.270 | 43 | | |
| 32.461 | 32 | 37.652 | 97 | 36.105 | 42 | 1 547 | 55 | | |
| 75 921 | 46 | 223 406 | 92 | 223.406 | 92 | | | | |
| 5.581 | 64 | 20.782 | 22 | 22 933 | 50 | | | | |
| 125.577 | 04 | 295 506 | 82 | 295 506 | 82 | | | | |
| 122.925 | 64 | 393.010 | 87 | 393.010 | 87 | | | | |
| 296 | 06 | 2.214 | 09 | 2.214 | 09 | | | | |
| 70.222 | 66 | 223.406 | 92 | 229.094 | 95 | | | 5 688 | 03 |
| 35·300 | 05 | 106 037 | 48 | 106.037 | 48 | | | | |
| 3·204 | 59 | 18.405 | 17 | 18.405 | 17 | | | | |
| 8.422 | 69 | 28.576 | 81 | 27.595 | 05 | | | | |
| 3.922 | 21 | 11.942 | 81 | 11.942 | 81 | | | | |
| 37.059 | 41 | 60.730 | 73 | 64 197 | 21 | 12.345 | 09 | 14 615 | 84 |
| 23.518 | 66 | 43.443 | 24 | 40.804 | 12 | | | 859 | 20 |
| 46 683 | 92 | 175 141 | 43 | 175 713 | 25 | | | | |
| 1.178 | 50 | 1.739 | 63 | 1.739 | 63 | | | | |
| 2.119 | 40 | 4 289 | 93 | 2.119 | 40 | 2.170 | 53 | | |
| 2.170 | 53 | - | | 2.170 | 53 | | | 2.170 | 53 |
| 4.668 | 21 | 4.668 | 21 | 4.668 | 21 | | | | |
| 14.238 | 55 | 14.238 | 55 | 14.238 | 55 | | | | |
| 716 723 | 24 | 1.963 276 | 54 | 1.963.276 | 54 | 23 333 | 60 | 23·333 | 60 |

## ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

*1925 թ. հունվարից մինչ ս. թ. դեկտեմբերի վերջը Սոցապգանձարկղին կից Բ. Վ. Հ. ունեցել է 94 նիստ։*

*Բ. Վ. Հ.-ի նախագահը համարվում է Գանձարկղի նախագահը, իսկ կազմի անդամներն են՝ մեկ ներկայացուցիչ Յերևանի Կոմիտեից, համատարմատար բժիշկը և յերկու մասնագետ բժիշկներ, համաձայն կանոնադրության։*

*Հանձնաժողով անցնելու համար ապահովագրված հիվանդներին սահմանված է հետևյալ կարգը.*

*1. Հիվանդության կամ հոգնածության պատճառով արձակուրդ կամ այլ բժշկական օգնություն ստանալու համար, հիվանդները ուղղվում են բժշկական ստուգիչ հանձնաժողով, բուժարանից, դիսպանսերներից, հիվանդանոցներից և շրջանային (ապահովագրական) ու համատարմատար բժշկի կողմից։*

*2. Հիվանդները նախքան հանձնաժողով անցնելը, պետք է լրիվ կերպով ու մանրազնին ուսումնասիրված լինին բուժհիմնարկների կամ բժիշկների կողմից և պետք է ունենան հանձնաժողով անցնելու համար իրենց հիվանդության վերաբերյալ բոլոր պարզաբանող փաստաթղթերը՝ դիագնոզի, անալիզների և այլն։*

*3. Բժշկական հանձնաժողով ուղարկվում են հիվանդները միայն այն դեպքում, յերբ վորոշ ժամանակ բուժվելուց հետո բուժհիմնարկները կամ բուժող (Գանձարկղի) բժիշկը անհրաժեշտ է գտնում այդ։*

*4. Նոքա նույնպես պետք է լրիվ կերպով ուսումնասիրված լինեն տեղական բժիշկներից, յեթե այդպիսիները կան։*



*Բ. Վ. Հ.-ի անցնողների թիվը յեղել է 1925 թ. 2.828 հոգի, վորից արական սեռ 2.169*
*իգական սեռ 659*

*Դրանցից մինչև 18 տարեկան՝ 77 հոգի, 18 տարեկանից բարձր 2.751 հոգի։*

*Ըստ աշխատանքի բնույթի ստորաբաժանվում է հետևյալ ձևով՝ գործի մեջ յեղած բանվորներ 724 հոգի, գործազուրկ բանվորներ 60 հոգի։*

*Գործի մեջ յեղած ծառայողներ՝ 1.863 հոգի, գործազուրկ ծառայող՝ 30 հոգի և ընտանիքի անդամներ՝ 151 հոգի։*

*Դրանցից ուղարկված են՝ Բուժարան ու դիսպանսեր բուժվելու . . . . 344 հ.*

*Հիվանդանոցներ . . . 246 հ.*

*Ուրիշ հանրապետություններ, մասնագիտական բժշկության կամ հատուկ հետազոտությունների համար . . . . 41 հ.*

*Ներկայացրած է՝*

*Սոցապգանձարկղին կից բժշկական կուրորտային հանձնաժողովին կուրորտ ուղարկելու համար 530 հոգի.*

*Ազատած են աշխատանքից հիվանդության պատճառով . . . . . 1.111 հոգի*

*Ճանաչված են աշխատունակ . . 517 »*

*Տեղափոխված են ավելի թեթև աշխատանքի . . . . . 14 »*

*Ճանաչված են հաշմանդամ և ուղղված բժշկական եքսպերտիզայի բյուրո . . 25 »*

*Ճանաչված են առողջ . . 32 »*

*. Ընդամենը 2.328 հ.*

Ըստ հիվանդությունների տեսակի, քննության յենթարկվողները ստորաբաժանվում են հետևյալ ձևով

| | Հոգի | Տոկոս |
|---|---|---|
| Սուր վարակիչ հիվանդութ. հետո | 37 հ. | 1,3 տոկ |
| Ներքին | 174 » | 6,2 » |
| Թոքախտ | 153 » | 5,4 » |
| Պալարխտ | 43 » | 1,5 » |
| Թոքերի այլ հիվանդություններ | 271 » | 9,6 » |
| Սրտի և անոթների | 120 » | 4,3 » |
| Ստամոքսի և աղիքների | 145 » | 5,2 » |
| Մեզասեռային հիվանդութ. | 33 » | 1,2 » |
| Նյութերի փոխանակության | 64 » | 2,3 » |
| Ռևմատիզմ | 201 » | 7,1 » |
| Վիրաբուժական | 389 » | 19,9 » |
| Ներվային | 243 » | 8,7 » |
| Մանկաբարձ. և կանացի | 51 » | 1,8 » |
| Սիֆիլիս | 19 » | 0,7 » |
| Վեներական | 18 » | 0,6 » |
| Մաշկի հիվանդություններ | 27 » | 0,9 » |
| Աչքերի | 56 » | 2. » |
| Կոկորդի | 12 » | 0,4 » |
| Քթի և ականջի | 22 » | 0,8 » |
| Մալարիա և արյան պակասություն | 612 » | 21‘8 » |
| Ատամների պրոտեզներ | 90 » | 3,2 » |
| Չպարզված | 16 » | 0,6 » |
| Առողջ | 32 » | 1,1 » |

Հիվանդությունների առաջին տեղը բռնում է մալարյան 21,8 տոկոս, վորը կլիմայական և տեղագրական պայմանների պատճառով շարունակաբար իր գերիշխող տեղն է բռնում մեր յերկրի հիվանդությունների մեջ։

2-րդ տեղը բռնում են վիրաբուժական հիվանդությունները 19,9 տոկոս. այդ թիվը, սակայն չի կարելի հաշվել կայուն, վորովհետև վիրաբուժական հիվանդների շարքում յեղել են մեծ թվով այնպիսիները, վորոնք



մխասվել են գործարաններում, շինարարական գործում և այլ տեղերում պատահական և թեթև կերպով։

Մի հանգամանք, վորի վրա արժե ուշադրություն դարձնել, այդ այն է, վոր վիրաբուժական հիվանդությունների մեջ այս տարի բավական պատկառելի տեղ է բռնել կույր աղիքի բորբոքումը։

3-րդ տեղը հիվանդությունների մեջ, գրավում է թոքերի զանազան հիվանդությունները 9,6 տոկոս։ Այս անվան տակ հաշված են վոչ միայն ցնցղատափ (բրոնխիտ), թոքերի բորբոքում, և այլ հիվանդություններ, ինչպես և թոքերի գումը (կատարր), վորը բռնում է այդ թվի 2 3-ը. համաձայն Մոսկվայի բժշկական 2-րդ համագումարի մշակված կլասսիֆիկացիայի այժմ կցվում է թոքախտի հետ, իբր թոքախտի առաջին շրջան։

Այսպիսով ուրեմն թոքախտով տառապողների թիվը 158-ից բարձրանում է 823-ի, տալով տոկոսային հարաբերություն 11,5 տոկոս։ Յեթե դրան ավելացնենք նույնպես 1,5 տոկ. զանազան որգաններին վերագրվող պալարախտը, այն ժամանակ կստանանք ընդհանրապես պալարախտով բռնվածների պատկերը 13 տոկոս։

Դրանից հետո գալիս են նյարդային հիվանդությունները 285 հոգի 2,7 տոկ. վորոնց մեծ մասը պետք է յենթադրել. վոր դարձյալ կրում է պալարախտային բնույթ։

Վերջապես ներքին հիվանդությունների թիվը 298 հոգի 11,4 տոկոս, հոդերի և մկանների ռևմատիզմ 7,1 տոկոս։

Վիրաբուժական հիվանդները ապաստան են գտնում Կենտ. բուժարանի 1-ին և 2-րդ հիվանդանոցների վիրաբուժական մասերում։

Ներվային հիվանդները, հիվանդությունները վորոշելու, ինչպես և բուժվելու համար լայն օգնություն են ստանում առաջին կլինիկական հիվանդանոցի Ներվոսեկ-

տրաբուժարանում յերթեվեկ կերպով, սակայն տարածության հեռավորությունը մեծ անհարմարություններ է ստեղծում հիվանդներից շատ շատերին, վորի համար անհրաժեշտ է ելեկտրաբուժական հարմարություններ ստեղծել Կենտրոնական բուժարանին կից։

Պալարախտով բռնված ստացիոնար հիվանդների դրությունը անմխիթար է, ի նկատի ունենալով, վոր սանատորյաներում տեղ են գտնում միայն առաջին և յերկրորդ շրջանի այնպիսի հիվանդները, վորոնք ման գալու հնարավորություն ունեն և դեռ չեն պառկել։

Ազատելու համար թոքախտավոր հիվանդներին իրենց բնակարաններից, անհրաժեշտ է ունենալ հատուկ հիվանդանոց, առնվազը 100 մահճակալներով, նույնպես սանատորյաներ, հասցնելով մահճակալների թիվը 3—400-ի. վերջապես անհրաժեշտ է արագացնել դիսպանսերներ բանալու խնդիրը, դուցե այդ միջոցներով, սիստեմատիկ պայքարից հետո, կարելի լինի իջեցնել պալարախտավորների թիվը մեր յերկրում.

Ընդհանրապես պետք է շեշտել, վոր մեր հիվանդանոցների անբավարար վիճակը ունի իր պատմական պատճառը։

Նախկին կառավարությունից մեր ձեռքն է անցել իբրև ժառանգություն մի ավերակ յերկիր, լի փլատակներով, ուր ապրելու բնակարանների մասին խոսք չեր կարող լինել, ինչ մնաց հիվանդանոցների մասին յերազելը։

Սակայն, շնորհիվ մեր շինարարական աշխատանքների, այժմ վոչ թե միայն ունենք կանոնավոր սարքավորված հիվանդանոցներ, ամբուլատորիաներ ու կլինիկաներ, այլև այսօր խոսում ենք սանատորիաների, կուրորտների ու հանգստյան տների մասին, չխնայելով մեր ուժերը, մեր հիվանդ ապահովագրվածների առողջացման գործում։



1003 13819

# ՆՊԱՍՏ-ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Գանձարկղի ամենահիմնական աշխատանքներից մեկը, նպաստ-կենսաթոշակների բաժինն է, վորը մինչ 1925 թ. փետրվարի 1-ը կատարվել է հաշվապահական բաժնում։

Նկատի առնելով Գանձարկղի հաճախորդների թվի օրեցօր աճումը, հաշվապահական ապարատը ի վիճակի չեր հաշվելու պահանջվելիք նպաստները ու միաժամանակ բավարարելու այս կամ այն հարցերին ու տեղեկանքներին, վորի հետևանքով բնականորեն, ձևակերպվեց նպաստ կենսաթոշակների բաժինը, անջատելով իր ֆունկցիաները հաշվապահությունից։

Կարճ ժամանակից հետո ըստ նպաստների դրույքի մշակվեցին նոր ձևի հատուկ ցուցակներ, վորով դրամական բաշխումները փոքր ի շատե կանոնավոր վեցին։

Շնորհիվ տրված հարցերին կամ հարուցված դիմումներին շուտափույթ պատասխաններ ստանալուն, հաճախորդների կողմից դժգոհությունները աստիճանաբար վերացան ու պոչերի թիվը պակասեց։

Այսպիսով պարզ յերևում է, վոր այս առաջի շրջանում Գանձարկղի աշխատանքները համեմատած անցյալի հետ 100 տոկոսով կանոնավորվում է. սակայն Գանձարկղի աշխատանքները, այդ խոշոր հառաջադիմությունից հետո, քարացած կանգ չեն առնում, այլ խոշոր քայլերով առաջ են ընթանում։

Այդ առաջխաղացման յերկրորդ շրջանը Յերևանի Ապահովագրական Գանձարկղի պատմության մեջ, կարելի յե բնորոշել, աշխատանքների կանոնավորման ու ռացիոնալիզացիայի բեկման միջոց. Գանձարկղը 25 թ. նոյեմբերի 1-ից անցնում է քարտային սիստեմի, վորով տարվելիք աշխատանքները յեռակի արագանում է ու աշխուժանում։

Բոլոր մեր ապահովագրված բանվոր ծառայողների համար բացվում են անձնական քարտեր, ու նշանակվում են նրանց ստացած բոլոր ձևերի նպաստները։

Սկզբում, յեթե կարիք էր լինում ստուգել, թե այս կամ այն ապահովագրվածը յերբ և ինչ ձևի նպաստ է ստացել, դա առնվազը տևում էր քսան րոպե, իսկ քարտային սիստեմին անցնելուց հետո, նման տեղեկանք տալու համար գործադրվում է ընդամենը յերկու րոպե։

Այսպիսով պարզացնելով ու արագացնելով այդ նախնական աշխատանքները, Գանձարկղը այժմ հնարավորություն ունի որեկան 3—400 ապահովագրվածի բավարարելու։

Այս բոլոր հաջողություններից հետո, ասել, վոր ամեն ինչ կարգին է, չենք կարող, դեռ գոյություն ունեն բացեր, վորոնց առաջիկայում պետք է հաղթահարել։

Մեր յուրաքանչյուր աշխատանքի փորձը աչքի առնելով ու սխալները ուղղելով, մյուս հաշվետու շրջանում մենք կգանք ավելի հաջողություններով ու քիչ բացերով։

Հաշվետու տարուց սկսած մարտի 1-ից 25 թ. Գանձարկղում ընդունված դիմումները ունեցել են հետևյալ պատկերը.

| 1925 թ. Ամիսներ | Ընդունված դիմումներ | Գործադուրկ: Ապահովագրվել է | Գործադուրկ: Մերժվել է | Հաշմանդամ: Ապահովագրվել է | Հաշմանդամ: Մերժվել է | Մահաց. ընտանիք: Ապահովագրվել է | Մահաց. ընտանիք: Մերժվել է |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մարտ | 113 | 63 | 36 | 7 | 1 | 6 | — |
| Ապրիլ | 85 | 41 | 39 | 2 | 2 | — | 1 |
| Մայիս | 98 | 75 | 19 | — | — | 4 | — |
| Հունիս | 115 | 87 | 17 | 3 | 2 | 4 | 2 |
| Հուլիս | 78 | 52 | 20 | 1 | 4 | 1 | — |
| Օգոստոս | 66 | 54 | 12 | — | — | — | — |
| Սեպտեմբեր | 25 | 15 | 10 | — | — | — | — |
| Ընդամենը | 508 | 387 | 153 | 13 | 9 | 15 | 3 |



### Աղյուսակ
Ապահովադիրների և ապահովագրվածների

| Տարիֆներ | I. կիսամյակ: Սկզբում: Ապահովադիրն. | I. կիսամյակ: Սկզբում: Ապահովագրվածն | I. կիսամյակ: Վերջում: Ապահովադիրն. | I. կիսամյակ: Վերջում: Ապահովագրվածն | II կիսամյակ: Սկզբում: Ապահովադիրն. | II կիսամյակ: Սկզբում: Ապահովագրվածն | II կիսամյակ: Վերջում: Ապահովադիրն. | II կիսամյակ: Վերջում: Ապահովագրվածն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտոնյալ | 44 | 3770 | 99 | 3808 | 99 | 3808 | 97 | 3835 |
| Նորմալ | 233 | 3453 | 229 | 3427 | 229 | 3427 | 240 | 3508 |
| Ընդամենը | 287 | 7223 | 328 | 7235 | 328 | 7235 | 337 | 7343 |

### Աղյուսակ
Ժամանակավոր անաշխատունակության

| Անաշխատունակության տեսակներ / Յեռամսյակներ | Հիվանդ. դեպքերի և վճարած օրերի թիվը: Հիվ. դեպքերի թիվը | Հիվանդ. դեպքերի և վճարած օրերի թիվը: Վճարած օրերի թիվը | 100 ապահովագրվածին ընկնում է: Հիվ. դեպքերի թիվը | 100 ապահովագրվածին ընկնում է: Հիվանդ. օրերի թիվը | Հղիության դեպքերի թիվը: Հղիների թիվը | Հղիության դեպքերի թիվը: Վճարած օրերի թիվը | 100 Ապահովագր. կանաց ընկնում է: Հղիների թիվը | 100 Ապահովագր. կանաց ընկնում է: Վճարած օրերի թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | 459 | 9813 | 2, | 42,3 | 87 | 2685 | 4,5 | 140,4 |
| II | 531 | 9363 | 2,3 | 42,9 | 100 | 3006 | 5,3 | 160,4 |
| III | 902 | 14958 | 4,5 | 74,7 | 86 | 2654 | 3,2 | 100,3 |
| IV | 1618 | 22989 | 7,5 | 106,5 | 88 | 2731 | 2,8 | 86,7 |
| Ընդամենը | 3510 | 57123 | — | — | 361 | 11076 | — | — |

## Ցուցակ
### Գործազուրկների

| Յեռամսյակներ \ Կարգեր | | Ապահովագրված գործազուրկների թիվը ըստ կարգերի — I Արակ. | I Իգակ | II Արակ. | II Իգակ | Ընդամենը Արակ. | Ընդամենը Իգակ. | Բաց թողած նպաստ. թիվն ըստ կարգերի — I | II | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | Սկզբում | 121 | 54 | 217 | 115 | 338 | 169 | 355 | 705 | 1060 |
| | Վերջում | 97 | 43 | 203 | 88 | 300 | 131 | | | |
| II | Սկզբում | 97 | 43 | 203 | 88 | 300 | 131 | 211 | 733 | 944 |
| | Վերջում | 62 | 9 | 132 | 83 | 194 | 92 | | | |
| III | Սկզբում | 62 | 9 | 132 | 83 | 194 | 92 | 165 | 759 | 924 |
| | Վերջում | 33 | 6 | 157 | 85 | 190 | 91 | | | |
| IV | Սկզբում | 33 | 6 | 157 | 85 | 190 | 91 | 108 | 542 | 650 |
| | Վերջում | 34 | 9 | 135 | 65 | 169 | 74 | | | |

## Ցուցակ
### Մահացածի ընտանիքների

| Յեռամսյակներ \ Կարգեր | | Մահացածի ընտանիքների թիվն ըստ կարգերի — 1/3 | 1/2 | 2/3 | Ընդամենը | Վճարած նպաստ. ըստ կարգերի — 1/3 | 1/2 | 2/3 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | Սկզբում | 16 | 22 | 39 | 77 | 41 | 58 | 116 | 215 |
| | Վերջում | 16 | 23 | 43 | 82 | | | | |
| II | Սկզբում | 16 | 23 | 43 | 82 | 33 | 59 | 110 | 202 |
| | Վերջում | 12 | 20 | 38 | 70 | | | | |
| III | Սկզբում | 12 | 20 | 38 | 70 | 28 | 56 | 98 | 182 |
| | Վերջում | 10 | 17 | 38 | 65 | | | | |
| IV | Սկզբում | 10 | 17 | 38 | 65 | 36 | 56 | 98 | 190 |
| | Վերջում | 16 | 21 | 39 | 76 | | | | |



## Ցուցակ
### Յերեխաների սննդադրամի

| Յեռամսյակներ \ Ստորաբաժանում | Վճարած սննդադրամի դեպքերի թիվը ըստ տեսակների — Ապահովագրվ կանանց | Ապահովագր. ընտանիքի անդամներին | Մահացածի ընտ. անդամն. և հաշմանդամներին | Հաշմանդամն. ընտանիքի անդամն. | Գործազուրկներին | Գործազուրկ. ընտ. անդամներին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | 140 | 1519 | 2 | 16 | 18 | 73 | 1768 |
| II | 39 | 1625 | - | — | 5 | 39 | 1708 |
| III | 136 | 2190 | 6 | 8 | 28 | 170 | 2538 |
| IV | 131 | 1800 | 7 | — | 37 | 1 | 1976 |
| Ընդամենը | 446 | 7134 | 15 | 24 | 88 | 283 | 7990 |

## Ցուցակ
### Յերեխաների միանվագ նպաստի

| Յեռամսյակներ \ Ստորաբաժանում | Վճարած յերեխաների միանվագ նպաստն. ըստ տեսակների — Ապահովագրվ. կանանց | Ապահովագրվ. ընտ. անդամներին | Մահացածի ընտ. անդամն. և հաշմանդամներին | Հաշմանդամն. ընտանիքների անդամներին | Գործազուրկներին | Գործազուրկ. ընտ. անդամներին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | 46 | 277 | — | 2 | 2 | 11 | 338 |
| II | 28 | 336 | — | 1 | — | — | 365 |
| III | 49 | 311 | — | 3 | 4 | 55 | 422 |
| IV | 56 | 340 | 2 | — | -- | 5 | 403 |
| Ընդամենը | 179 | 1264 | 2 | 6 | 6 | 71 | 1528 |

## Աղյուսակ
### Թաղման նպաստի

| Ստորաբաժանում / Ցեռամսյակներ | Վճարած թաղման նպաստն ըստ տեսակների: Ապահովագրվածին | Ապահովագր. ընտանիքի անդամներին | Մահացած ընտանիքի անդ. և հաշման. | Հաշմանդ. ընտանիքի անդամներին | Գործազուրկներին | Գործազուրկ ընտանիքի անդամներին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | 2 | 52 | 2 | — | — | 1 | 57 |
| II | 61 | 35 | — | — | — | — | 96 |
| III | 40 | 42 | — | 1 | 1 | 8 | 92 |
| IV | 45 | 117 | 1 | — | 3 | — | 166 |
| | 148 | 246 | 3 | 1 | 4 | 9 | 411 |

## Աղյուսակ
### Մահացության և ծնունդների

| Ստորաբաժանում / Ցեռամսյակներ | Մահացության դեպքերի թիվը | Ծնվածների թիվը |
|---|---|---|
| I | 57 | 204 |
| II | 96 | 209 |
| III | 92 | 319 |
| IV | 166 | 325 |
| Ընդամենը | 411 | 1 057 |



## Աղյուսակ
### Հաշմանդամների

| Ցեռամս. / Կարգեր | | Հաշման դամների թիվն ըստ կարգերի: I Արակ. | I Իգակ. | II Արակ. | II Իգակ. | III Արակ. | III Իգակ. | Ընդամ. Արակ. | Ընդամ. Իգակ. | Վճար. նպաս. ըստ կարգ.: I | II | III | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | Սկզբ. | 44 | 6 | 50 | 8 | 37 | 27 | 131 | 41 | 173 | 173 | 179 | 525 |
| | Վերջ. | 43 | 5 | 50 | 9 | 44 | 23 | 137 | 37 | | | | |
| II | Սկզբ. | 43 | 5 | 50 | 9 | 44 | 23 | 137 | 37 | 123 | 129 | 127 | 879 |
| | Վերջ. | 26 | 6 | 40 | 6 | 22 | 11 | 88 | 23 | | | | |
| III | Սկզբ. | 26 | 6 | 40 | 6 | 22 | 11 | 88 | 23 | 89 | 78 | 52 | 219 |
| | Վերջ. | 23 | 4 | 23 | 5 | 11 | 8 | 57 | 17 | | | | |
| IV | Սկզբ. | 23 | 4 | 23 | 5 | 11 | 8 | 57 | 17 | 99 | 95 | 66 | 260 |
| | Վերջ. | 36 | 4 | 81 | 3 | 17 | 13 | 94 | 20 | | | | |

Գանձարկղի նախագահ՝ **Աղասի Մարտիրոսյան**

Կոմիտեյի անդամներ՝
**Վերգինե Մխիթարյան**
**Միսակ Միրզայան**
**Պետրոս Ղարիբյան**
**Գառնիկ Խաչատրյան**

Քարտուղար՝ **Հ. Խուզանյան**

ՀՀ Ազգային գրադարան
NL0209201

43. 742